ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆ

«13» մարտի 2017 թվականի N33-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 122-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝ կատարումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների (այսուհետ՝ Ծրագիր)՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման վերահսկողների և կատարողների ցանկը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Վերահսկողներին և կատարողներին՝ ապահովել Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցառումների իրականացումը և գերակա խնդիրների լուծումը:
3. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցառումների և գերակա խնդիրների կատարման հսկողությունը, և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում արդյունքների մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի
2017 թվականի «13» մարտի N 33 -Ա հրամանի

# ՑԱՆԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| հ/հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Վերահսկողները | Կատարողները | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (Որոշման հավելված 1-ի կետ 1) | Կսահմանվեն էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող միջոցառումներ և դրանց կատարման կոնկրետ ժամկետներ, որոնց իրականացումը թույլ կտա ազատականացնել ներքին էլեկտրաէներգետիկ շուկան և խթանել փոխշահավետ միջսահմանային առևտուրը Վրաստանի հետ, ինչը կնպաստի ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը: | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան | ԷՎ | մայիսի 3-րդ տասնօրյակ |
| 2. | «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (Որոշման հավելված 1-ի կետ 2) | Կստեղծվեն ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող իրավական պայմաններ և դրա հետ կապված կհստակեցվեն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և այլ պետական մարմինների գործառույթները, որոնց իրականացումը թույլ կտա ազատականացնել ներքին էլեկտրաէներգետիկ շուկան և խթանել փոխշահավետ | | | մայիսի 3-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | միջսահմանային առևտուրը Վրաստանի հետ: | | | |
| 3. | «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման միջոցառումների պլան-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (Որոշման հավելված 1-ի կետ 3) | Կմշակվի ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման միջոցառումների պլան-ժամանակացույցը, որով կհստակեցվեն շահագրգիռ գերատեսչությունների համատեղ կատարվող աշխատանքները, կսահմանվեն միջոցառումների իրականացման ժամկետները և պատասխանատու կատարողները: | | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 4. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 26-ի N 313 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (Որոշման հավելված 1-ի կետ 4) | Կսահմանվեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների ստացման օբյեկտների (արևային ֆոտովոլտային, երկրաջերմային, հողմային և այլ տեղակայանքների) բնականոն գործունեությունը, քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգությունն ու գույքի պաշտպանությունն ապահովող գոտիները: | | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 5. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (Որոշման հավելված 1-ի կետ 6) | Հաշվի առնելով 2014-2016 թվականների ընթացքում էներգետիկ համակարգում կատարված աշխատանքները և արձանագրված զարգացումները՝ կվերանայվեն ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումները և իրականացման ժամկետները՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ էներգետիկ անվտանգության պահանջների կատարման արդյունավետությունը: | | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 6. | «Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների (մինչև ներառյալ 150 կՎտ դրվածքային հզորություն) մասսայականացմանն ուղղված խթանիչ ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային | Կսահմանվեն խթանիչ միջոցառումներ վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացման համար: | | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | որոշման նախագիծը<br>ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը<br>(Որոշման հավելված 1-ի կետ 5) | | | | |

Հավելված N 2
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի
2017 թվականի «13» մարտի № 33 -Ա հրամանի

# Ց Ա Ն Կ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| h/h | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Վերահսկողներ | Կատարողներ | Յուրաքանչյուր քայլի կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում (Որոշման հավելված 2-ի կետ 2) | 1) հենասյուների և սարքավորումների ներկրման աշխատանքների ավարտ | Նախարարի տեղակալ՝ Հայկ Հմայակի Հարությունյան ՎԴԾՎ պետ՝ Վ.Մարտիրոսյան | «ԲԷՅ» ՓԲԸ | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) հենասյուների հիմքերի փորման բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացում (Իրանի արտահանման զարգացման բանկ (ԻԱԶԲ) և Սանիր Ինտերնեյշնլ ՖԶԵ ընկերություն) | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) |
| 2. | Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկ (Որոշման հավելված 2-ի կետ 3) | 1) գլխավոր կապալառուների ընտրություն և պայմանագրերի կնքում | Նախարարի տեղակալ՝ Հայկ Հմայակի Հարությունյան ՎԴԾՎ պետ՝ Վ.Մարտիրոսյան | «ԲԷՅ» ՓԲԸ | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) գլխավոր կապալառուներին կանխավճարների վճարում և պայմանագրերի էֆեկտիվացում | | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 3) ենթակայանների և էլեկտրահաղորդման օդային գծերի նախագծման աշխատանքների մեկնարկ (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ (KfW), Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ), Եվրամիության հանձնաժողով (NIF գործիքի ներքո) | | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և արդիականցման իրականացում (Որոշման հավելված 2-ի կետ 4) | 1) Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների լրացուցիչ հետազոտությունների իրականացում (պլանային նախազգուշական վերանորոգման աշխատանքների ընթացքում) | Նախարարի տեղակալ՝ Հայկ Հմայակի Հարությունյան, ՎԴԾՎ պետ՝ Վ.Մարտիրոսյան, ԷՎ պետ՝ Հ.Բադալյան | «ՀԱԷԿ» ՓԲԸ | հունիսի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) աշխատանքների իրականացման հաստատված պլանին և ժամանակացույցին համապատասխան՝ սարքավորումների մատակարարում (ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար ՀՀ կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագիր (270 մլն դոլարի վարկային և 30 մլն դոլարի դրամաշնորհային միջոցներ) | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 4. | Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացում (Որոշման հավելված 2-ի կետ 5) | 1) «Կարկառ» երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման աշխատանքների արդյունքում երկրաջերմային հնարավոր էլեկտրակայանի իրագործելիության ուսումնասիրություն և արդյունքների ամփոփում (Համաշխարհային բանկի միջոցով տրամադրվող Կլիմայի ներդրումային հիմնադրամների Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի միջոցներ) | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան, ԷՎ պետ՝ Հ.Բադալյան | «ՀՎԷԷ» հիմնադրամ | հունիսի 3-րդ տասնօրյակ |
| 5 | «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա երկրաբանական տեղեկությունների և օգտակար հանածոների հանքավայրերի ու երևակումների անձնագրերի թվայնացման և | 1) օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի թվայնացում | Նախարարի տեղակալ՝ Վարդան Գագիկի Գևորգյան, ԸԳ պետ՝ Ե.Հովհաննիսյան | «ՀԵՖ» ՊՈԱԿ | հունիսի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) թվայնացված անձնագրերի տեղադրում ինտերնետ կայքում («Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 3) առկա երկրաբանական տեղեկությունների 100 տոկոս թվայնացում | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | hրապարակման աշխատանքների իրականացում (Որոշման հավելված 2-ի կետ 6) | 4) թվայնացված տեղեկությունների տեղադրում ինտերնետ կայքում (ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID) | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |